

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ

**ՄԻՋԱԶԳ-ԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 20-ՐԴ
ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՒ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ, ՄԱՍՆԱԻՈՐԱՊԷՍ ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ**

Սոյն յօդուածում անդրադարձել ենք ցեղասպանութիւն երևոյթի՝ որպէս համամարդկային յանցագործութիւն դրոյթի իրաւակիրառութեանը, ներկայացրել ենք Հայոց ցեղասպանութեան եւ Հորքոսթի միջեւ գրուած նմանութիւններն ու փարբերութիւնները:

Աշխարհնքում պատմական երևոյթներից զայր փեղ են գրել նաեւ իրաւական, քաղաքագիտական եւ միջազգային օրէնքներ, որոնք առաջին եւ համամարդկային քայլերն են զսպելու եւ կանխարգելելու ցեղասպանութիւնների յետագայ կրկնութիւնը:

Յեղասպանութիւնը միջազգային իրաւունքի պատմութեան մէջ մարդկութեան դէմ ուղղուած ամենածանր յանցագործութիւնն է, որը դատապարտուած է քաղաքակիրթ աշխարհի կողմից: Այն ռասսայական, ազգային, էթնիկ կամ կրօնական պատճառներով բնակչութեան առանձին խմբերի կամ ամբողջ ժողովուրդների լիակատար կամ մասնակի նպատակադրուած ոչնչացումն է խաղաղ կամ պատերազմական պայմաններում:

Ի տարբերութիւն կոտորածների, որոնք պատմութեան ընթացքում պարբերաբար կրկնուելով կրել են անկազմակերպ եւ տարերային բնոյթ, ցեղասպանութիւնը նախապէս կազմակերպուած, կանխամտածուած եւ գիտակցաբար կատարուած պետական ծրագրուած միջազգային ոճրագործութիւն է, որը հետապնդում է որեւէ ժողովրդի ոչնչացման նպատակ: Յեղասպանութիւններ ու տեղահանութիւններ մարդկութեան պատմութեան մէջ շատ են եղել՝ յատկապէս աւերիչ պատերազմների, էթնիկ ու կրօնական ներքին ընդհարումների, եւրոպական տերութիւնների կողմից աշխարհի բաժանման ու վերաբաժանման ժամանակ: Արդիւնքում բազմաթիւ էթնոկրօնական խումբեր վերացել են: Մարդկութիւնն այդ ոճրագործութիւններն անուանել է «ջարդեր», «զանգուածային կոտորածներ» եւ «սպանութիւններ»: Իմաստային առումով սրանք շատ յաճախ համընկնում են «ցեղասպանութիւն» հասկացութեան հետ:

«Յեղասպանութիւն» եզրը (յունարէն «genos»՝ ազգ, ցեղ եւ լատիներէն «cide» սպանել) առաջին անգամ գիտաքաղաքական շրջանառութեան մէջ է դրուել 1944 թ. հրէական ծագումով լեհ իրաւաբան՝ Ռաֆայէլ Լեմկիւնի կողմից: Դեռեւս հրէական Հոլոքոսթից առաջ՝ 1933 թ. Հոկտեմբերի 14-20-ին Մադրիդում կայացած քրէական իրաւունքի 5-րդ միջազգային խորհրդաժողովի ժամանակ, վերջինս առաջարկել է իբրեւ «բարբարոսական ոճրագործութիւն արգելել ցեղասպանական գործողութիւնները»: «Յեղասպանութիւն» ասելով Լեմկիւնը հասկանում էր այն, ինչ տեղի էր ունեցել հայ ժողովրդի հետ Թուրքիայում՝ Առաջին աշխարհամարտի տարիներին: Իր յուշերում նա գրել է. «Թուրքիայում 1.200.000 հայեր սպանուել են միայն այն բանի համար, որ հայ են եղել ու քրիստոնէայ: Երկրորդ աշխարհամարտում ես կորցրեցի իմ ընտանիքի 49 անդամների, սակայն իրաւաբան դարձայ ու ցեղասպանութեան յանցագործութեան դէմ պայքարին կեանքս նուիրեցի հէնց հայերի հետ պատահածի պատճառով»: Որ-

պէս մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութիւն, Երկրորդ աշխարհամարտից յետոյ «Յեղասպանութիւն» հասկացութիւնը ստացաւ միջազգային իրաւական կարգավիճակ: XX դարում ցեղասպանութեան ամենայայտնի փաստերից են՝ նացիստական Գերմանիայի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հրեաների (Հոլոքոսթ) եւ գնչուների բնաջնջումը՝ Գերմանիայում եւ զաւթուած երկրներում կառուցուած համակենտրոնացման ճամբարներում: Ոչնչացուել են շուրջ 6 միլիոն հրեայ, հարիւրհազարաւոր սլաւոններ, գնչուներ եւ էթնիկ այլ խմբերի ներկայացուցիչներ: Ֆաշիզմի ջախջախումից յետոյ Նիւրենբերգեան դատավարութիւնը հրեաների ցեղասպանութիւնը յայտարարել է յանցագործութիւն մարդկութեան դէմ եւ դատապարտել: Հրեաներին հնարաւորութիւն է տրուել ապաստանելու իրենց պատմական հայրենիքում՝ Իսրայէլում, եւ վերականգնելու հրեական պետականութիւնը¹:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Պաւելիչի պրո-ֆաշիստական խորուածական ռեժիմի կողմից սերպերի բնաջնջման արդիւնքում զոհուել է մօտ 700.000 մարդ: 1960 թուականի Օգոստոսին Իրաւաբանների միջազգային յանձնաժողովն իր գեկոյցում յայտարարեց, որ «Տիբեթում տեղի են ունեցել ցեղասպանութեան գործողութիւններ»: Պոլ Պոտի եւ Իենգ Սարիի ռեժիմի կողմից 1975-1979 թուականների ընթացքում Կամբոջայում մինչեւ երեք միլիոն կամբոջացիներ բնաջնջուեցին²: Իրաքեան զօրքերի կողմից 1987-89 թթ-ին Անֆալ ռազմագործողութեան ընթացքում իրաքեան զօրքերը իրագործեցին քուրդ բնակչութեան կոտորածը Հիւսիսային Իրաքում: 1994 թուականին տեղի է ունեցել Ռուանդայի զանգուածային կոտորածը, որի արդիւնքում խուտու ցեղի ներկայացուցիչները կոտորեցին 800.000 մարդու տուտսի ցեղից: 2003 թ-ից Դարֆուրում (Սուդանի Ժողովրդական Հանրապետութիւն) էթնո-քաղաքական հակամարտութեան պատճառով արաբալեզու քոչուորները կոտորեցին աֆրիկացի նստակեաց բնակչութեանը:

Յեղասպանութեան իւրայատուկ դրսեւորում էր ապարտեիդը (անջատ բնակութիւն). Հարաւ-աֆրիկեան Հանրապետութիւնում 1948-94 թթ-ին եւրոպական ծագում չունեցող բնակչութեան համար առանձնացուած էին յատուկ ապրելավայրեր (ռեզերվուար), որտեղ սահմանուած կարգի խախտումը համարւում էր քրէօրէն պատժելի³: Իւրաքանչիւր մշակոյթի եւ հասարակութեան մէջ գոյութիւն ունի «իւրայինների» եւ «օտարների» միջեւ տարանջատում՝ հիմնուելով ազգութեան, ռասայի, կրօնի եւ այլնի վրայ: Այն դէպքում, երբ հասարակութիւնը երկբեւեռ է, այսինքն, երբ այնտեղ ապրում են երկու խոշոր եւ տարբեր բնակչութիւններ, ցեղասպանութեան առաջացման հաւանականութիւնը մեծ է: Յեղասպանութեան կազմակերպիչ կողմը յաճախ հերքում է փաստը՝ երբեմն նոյնիսկ հէնց ցեղասպանութեան զոհերին մեղադրելով սոսկալի յանցագործութիւնների մէջ: Յեղասպանութեան կազմակերպիչներն ակտիւօրէն արգելափակում են այդ յանցագործութիւնների հետաքննութիւնները, ոչնչացնում եղբայրական գերեզմանները: Որոշ դէպքերում, նրանց յաջողուել է փախչել քրէական պատասխանատուութիւնից եւ ապրել խաղաղութեան մէջ:

Հայոց ցեղասպանութիւնը եւ Հոլոքոսթը XX դարի զանգուածային սպանութիւնների միւս օրինակներից տարբերւում են իրենց երկարատեւ նախապատմութեամբ: Հայերը եւ հրեաները համապատասխանաբար Օսմանեան Թուրքիայում եւ եւրոպական տարբեր պետութիւններում, ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնների եւ հպատակ քաղաքացիների կարգավիճակում էին: Եթէ հայերը հպատակութիւն էին

¹ Տէս Մաթոսեան Տ., Հայոց ցեղասպանութիւն եւ հրեական հոլոքոսթ, Երեւան, 2005, էջ 96-120:

² <http://www.genocide.ru/lib/genocides/cambodian.htm>

³ http://www.un.am/res/UN%20Treaties/III_7.pdf

ընդունել թուրքերի նուաճումների հետեւանքով այն էլ սեփական հայրենիքի տարածքում, ապա հրեաներն այդ վիճակում էին յայտնուել մշտական դեգերումների արդիւնքում, հայերի ցեղասպանութիւնը կատարուել է եկուորների կողմից, իսկ հրեաները իրենք էին Գերմանիայում եկուորներ: Հայերը արմենոցիդի արդիւնքում կորցրեցին հայրենիք՝ Արեւմտեան Հայաստան, դա կրկնակի կորուստ էր, որը հրեաների դէպքում չեղաւ, ընդհակառակը նրանք ձեռք բերեցին ե՛ւ տարածք, ե՛ւ պետութիւն: Արմենոցիդից յետոյ հայերի փրկուած բեկորները ցրուեցին համարեայ համայն աշխարհով մէկ, իսկ հոլոքոսթից եւ Իսրայէլ պետութեան կազմաւորումից յետոյ, սկսուեց հրեաների ազգային համահաւաքը: Հոլոքոսթի հանրային ժխտումը, նացիստների կատարած յանցագործութիւններին հաւանութիւն տալը կամ դրանք արդարացնելն ուղղակիօրէն արգելող օրէնքներ ընդունուել են Աւստրիայում, Բելգիայում, Գերմանիայում, Լիտւայում, Լիւքսեմպուրգում, Լեհաստանում, Ռուսաստանում, Սլովենիայում, Ֆրանսիայում, Շուէյցարիայում, ինչպէս նաեւ Կանադայում եւ Իսրայէլում⁴: Համանման օրէնքներ գործում են նաեւ Լիխտենշտայնում, Պորտուգալիայում, Չեխիայում եւ Սլովակիայում: 2010 թուականին օրէնքը, որը պատիժ է սահմանում տոտալիտար քաղաքական ռեժիմի կողմից իրականացրած յանցագործութիւնների ժխտման համար, ընդունուել է Յունգարիայում: ԱՄՆ-ում հոլոքոսթի ժխտումը քրէօրէն պատժելի չէ, քանի որ սեփական հայեացքների ազատ արտայայտումը պաշտպանուած է ԱՄՆ Սահմանադրութեան առաջին փոփոխմամբ:

2011 թուականին համանման որոշում է կայացրել նաեւ Իսպանիայի բարձրագոյն դատարանը: Դանիայում եւ Նորուեգիայում ժխտումը նոյնպէս օրէնքով արգելուած չէ: Բազմաթիւ երկրներում Հոլոքոսթի ժխտումը հետապնդում է գործող քրէական օրէնսգրքի շրջանակներում, սակայն որոշ երկրներ ընդունել են առանձին օրէնքներ, որոնք արգելում են նացիստների իրականացրած հոլոքոսթի ժխտումը: Պատիժը սովորաբար ներառում է խոշոր չափերի տուգանք եւ բանտարկութիւն: Որոշ երկրներում (Աւստրիա, Ռումինիա եւ Չեխիա) ազատագրկման առաւելագոյն ժամկէտը կազմում է 10 տարի: Հոլոքոսթի ժխտման արգելքը կիրառելի է ռոմանա-գերմանական իրաւական համակարգում, որտեղ, ի տարբերութիւն անգլոսաքսոնական իրաւական համակարգի, աւելի խստօրէն է սահմանափակուում խօսքի ազատութիւնը, օրինակ՝ որոշակի խմբերի նկատմամբ ատելութեան սերմանումը եւ տարածումը: 1994-ի Ապրիլի 6-7-ի յեղաշրջման արդիւնքում Ռուանդայում իշխանութեան եկած ժամանակաւոր կառավարութիւնը, կազմուած երկրում մեծամասնութիւն կազմող խութու ազգութեան ներկայացուցիչներից, ցեղասպանութիւն իրագործեց երկրում: Ցեղասպանութեան զոհ դարձան երկրի ազգային փոքրամասնութիւն կազմող թութսիները, ինչպէս նաեւ չափաւոր քաղաքական հայեացքներ ունեցող խութուների ներկայացուցիչները: Ցեղասպանութեան նպատակն էր ամբողջութեամբ բնաջնջել երկու խմբերին, ինչպէս նաեւ պատասխան գործողութիւնները ռազմա-քաղաքական Ռուանդայի հայրենասիրական ճակատի դէմ, որի գործողութիւններն ուղղուած էին խութուների դէմ, որոնք իրագործում էին թութսիների սպանութիւնները: Ըստ Ռուանդայի կառավարութեան պաշտօնական տուեալների, զոհուել է 937 հազար մարդ, ՄԱԿ-ի կողմից ընդունուած այլ տուեալներով՝ մօտ 800 հազար մարդ: Արտագաղթել է մօտ մէկ միլիոն մարդ երկրի ներսում եւ սահմաններից դուրս: Փախստականների ճամբարներում հակասանիտարական պայմանների պատճառով խոլերայի համաճարակ բռնկուեց, չէր բաւարարում դեղորայքը, սննդամթերքը: 1994 թուականի Ապրիլ-Յունիսի իրադարձութիւնների հետեւանքով հարեւան երկրները ստիպուած եղան հազարաւոր փախստականների ընդունել: 1994-ի Նոյեմբերին Տանզանիայում աշխատանքը սկսեց Ռուանդայի գծով

⁴ <http://www.antisemitism.org>

միջազգային տրիբունալը, որը դատապարտեց Ռուանդայի քաղաքացիների զանգուլաժային ոչնչացման կազմակերպիչներին ու նախաձեռնողներին, որոնց թվում հիմնականում իշխող ռեժիմի պաշտօնեաներն էին: 2008 թ.-ի Դեկտեմբերի 18-ին տրիբունալը դատապարտեց Ռուանդայի բանակի նախկին գնդապետ Տեոնեստե Բագոսորային ցմահ բանտարկութեան ցեղասպանութեան համար, ռազմական յանցագործությունների ու մարդկայնության դեմ յանցագործությունների համար: 2011-ի Մայիսի 17-ին Ռուանդայի ԶՈւ նախկին գեներալ Օգիլստեն Բիզիմունգուն դատապարտուեց 30 տարուայ ազատազրկման ցեղասպանութեանը մասնակից լինելու համար: Տրիբունալի իրաւասութիւնից դուրս մնացած անձանց համար երկրում ստեղծուել է տեղական դատաբանների համակարգ, որը շուրջ 100 մարդու մահապատժի է դատապարտել⁵:

Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Ու թէեւ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդը՝ Թուրքիան, հերքում է 1,5 միլիոն հայի ոչնչացման փաստը, համաշխարհային ճանաչման գործընթացն անշեղորէն առաջ է գնում: Օսմանեան կառավարութեան կողմից իրականացրած Հայոց ցեղասպանութեան փաստը հիմնաւորուել է, ճանաչուել ու հաստատուել է ականատեսների վկայութիւններով, օրէքներով, բանաձեւերով եւ բազմաթիւ նահանգների ու միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնների որոշումներով: 1915-23 թթ. Օսմանեան կայսրութիւնում հայ բնակչութեան մասայական կոտորածները որպէս նախապէս ծրագրաւորուած ու հետեւողականօրէն իրագործած ցեղասպանական ակտ որակող փաստաթղթերի ամբողջական շարքը հսկայական է⁶:

Հայոց ցեղասպանությունն առաջինն ընդունեց եւ դատապարտեց Ուրուգուայը⁷: 1965 թ.-ի Ապրիլի 20-ին Ուրուգուայի սենատի գլխաւոր վեհաժողովը եւ Ներկայացուցիչների պալատն ընդունեց «Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի օրուայ մասին» օրէնքը: Սենատը եւ Ներկայացուցիչների պալատը համատեղ Գլխաւոր ասամբլեայում ընդունեցին բանաձեւ՝

Յօդուած 1. Առաջիկայ Ապրիլի 24-ը յայտարարուում էր «Հայ նահատակների յիշատակի օր»՝ նուիրուած 1915 թ. այդ ազգութեան ներկայացուցիչների կոտորածներին զոհ գնացածներին:

Յօդուած 2. Պաշտօնական ռատիօ ծառայութիւնների կայանները պէտք է այդ օրը իրենց հաղորդումների մի մասը նուիրեն վերոյիշեալ ազգութեան զոհերի յիշատակին:

Յօդուած 3. Հայկական ծագում ունեցող քաղաքացիներին, որոնք հանդիսանում են պետական ծառայողներ, թոյլատրուում է այդ օրը աշխատանքի չներկայանալ:

Յօդուած 4. Մոնտեվիդէօյի շրջանի երկրորդ աստիճանի թիւ 156 դպրոցը անուանակոչել «Հայաստան»:

1991 թ. Դեկտեմբերին Հայաստանի անկախութիւնը ճանաչող երկրների թվում էր նաեւ Թուրքիան, որը թվում էր, թէ իր շահերից ելնելով, պէտք է բարիդրացիական յարաբերութիւններ հաստատէր հարեւանների՝ յատկապէս Հայաստանի հետ, բայց նա ոչ միայն հրաժարուեց դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելուց, այլեւ երկկողմ յարաբերութիւնների կարգաւորման նպատակով առաջ քաշեց մի շարք նախապայմաններ: Դրանցից էին՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչումից ու պահանջատիրութիւնից, Արցախեան հիմնահարցի դրական լուծումից հրաժարում եւ սփիւռքահայութեան հակաթուրքական գործունէութեան վերացում, Կարսի պայմանա-

⁵ <http://www.panarmenian.net/arm/news/177691/>

⁶ <http://www.mfa.am/hy/recognition/>

⁷ **Նահապետեան Հ.,** Ո՞ր խոհրդարանն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը:

գրի ճանաչում⁸:

Ռուսաստանի Պետդոլման 1995 թ.-ի Ապրիլի 14-ին՝ 1915-1922 թուականներին Ցեղասպանություն իրագործողներին դատապարտող եւ Ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության զոհերի յիշատակի օր ճանաչող հռչակագիր է ընդունել:

1996 թ.-ի Ապրիլի 25-ին Յունաստանի խորհրդարանը որոշում ընդունեց Ապրիլի 24-ը ճանաչել 1915 թ.-ին Օսմանեան կայսրությունում Հայոց ցեղասպանության զոհերի յիշատակի օր:

1996 թ.-ի Ապրիլի 23-ին Քուէբեկի խորհրդարանականների խմբի ներկայացմամբ՝ Կանադայի խորհրդարանը բանաձեւ ընդունեց, որով դատապարտում է Հայոց ցեղասպանությունը: «Համայնքների պալատը, ողբերգության 81-րդ տարելիցի առիթով, որը խլել է շուրջ 1,5 միլիոն մարդու կեանք, որոշում է ընդունել Ապրիլի 20-27-ը համարել մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի զոհերի յիշատակի շաբաթ», - նշում է բանաձեւում: 2002 թ.-ի Յունիսի 13-ին Կանադայի սենատը (խորհրդարանի վերին պալատը) բանաձեւ ընդունեց, որով ճանաչում է Հայոց ցեղասպանությունը: 2004 թ.-ի Ապրիլին Կանադայի խորհրդարանի Համայնքների պալատը ճանաչեց 1915 թ.-ին Օսմանեան կայսրությունում Հայոց ցեղասպանությունը:

Իտալական 33 քաղաք ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Իտալիայի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը 2000 թ.-ին:

2016 թ.-ի Ապրիլի 21-ին Սիցիլիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

1997 թ.-ի Ապրիլի 3-ին Լիբանանի Ազգային ժողովը բանաձեւ ընդունեց, որով ճանաչեց Ապրիլի 24-ը որպէս Հայ ժողովրդի ողբերգական կոտորածի յիշատակի օր: Բանաձեւը կոչ է անում Լիբանանի ժողովրդին՝ Ապրիլի 24-ին միասնական լինել հայ ժողովրդի հետ: 2000 թ.-ի Մայիսի 12-ին Լիբանանի խորհրդարանը ճանաչեց եւ դատապարտեց Հայոց ցեղասպանությունը: 11 Մայիսի 2000 թ.՝ Օսմանեան իշխանության կողմից 1915 թուականին կազմակերպուած ջարդերի 85-ամեակի առթիւ, որի հետեւանքով ոչնչացւեցին 1,5 միլիոն հայեր, Լիբանանի պատգամաւորների Պալատը ճանաչում է եւ դատապարտում հայ ժողովրդի դէմ իրականացուած ցեղասպանությունը եւ իր լիակատար համերաշխութիւնն է յայտնում իր երկրի հայ քաղաքացիներին: Դրանից բացի, Պալատը գտնում է, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը անհրաժեշտ պայման է կանխելու նմանօրինակ յանցագործությունները, որոնք կարող են ձեռնարկուել ապագայում⁹:

1998 թ.-ի Մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ¹⁰: 2000 թ.-ի Նոյեմբերի 7-ին Ֆրանսիայի սենատը քուէարկեց Հայոց ցեղասպանության մասին բանաձեւի օգտին: Սակայն սենատորները փոխեցին բանաձեւի տեքստը՝ փոխարինելով սկզբնական «Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչում է Օսմանեան Թուրքիայում Հայոց ցեղասպանության իրականացման փաստը» վերնագիրը՝ այն դարձնելով «Ֆրանսիան պաշտօնապէս ճանաչում է, որ հայերը դարձել են 1915 թ.-ի ցեղասպանության զոհ»: 2001 թ.-ի Յունուարի 18-ին Ֆրանսիայի

⁸ Յովհաննիսեան Ն., Մերձաւոր արեւելեան տարածաշրջանը եւ Հայաստանի ազգային անվտանգութեան խնդիրը (Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, թիւ 16, Երեւան, 1996, էջ 14):

⁹ Տէս Բարսեղեան Լ., Հայոց ցեղասպանութեան հրապարակայնօրէն դատապարտման եւ նանաչման ժամանակագրութիւն 1925-2000, Երեւան, 2001:

¹⁰ Տէս Բարսեղեան Լ., Ֆրանսիան հայոց ցեղասպանութիւնը օրէնսդրութեամբ նանաչած առաջին պետութիւնն է աշխարհում, Երեւան, 2002:

Ազգային ժողովը միաձայն բանաձեւ ընդունեց, որի համաձայն՝ Ֆրանսիան ճանաչում է 1915-1923 թթ. Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան փաստը: 2006 թ.-ի Հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի խորհրդարանն ընդունեց օրինագիծ, որի համաձայն՝ Հայոց ցեղասպանութեան հերքումը կը դառնայ քրէական յանցագործութիւն այնպէս, ինչպէս Հոլոքոսթի հերքումը:

1998 թ.-ի Ապրիլի 16-ին Բուէնոս Այրէսի օրէնսդիր մարմինն ընդունեց յուշագիր, որում համերաշխութիւն յայտնեց Արգենտինայի հայկական համայնքին, որը նշում էր Օսմանեան կայսրութիւնում՝ Հայոց ցեղասպանութեան 81-րդ տարելիցը: 1998 թ.-ի Ապրիլի 22-ին Արգենտինայի Սենատն ընդունեց յայտարարութիւն, որը դատապարտում է ցանկացած բնոյթի ցեղասպանութիւնը՝ որպէս մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւն: Նոյն յայտարարութիւնում Սենատը համերաշխութիւն է յայտնել բոլոր ազգային փոքրամասնութիւններին, որոնք դարձել են ցեղասպանութեան զոհ՝ յատկապէս մտահոգութիւն յայտնելով ցեղասպանութեան կազմակերպիչների անպատժելիութեան վերաբերեալ: Յայտարարութեան հիմքում՝ որպէս ցեղասպանութեան դրսեւորում, նշուած են հայ, հրեայ, քուրդ, պաղեստինցի, գնչու եւ Աֆրիկայի շատ ժողովուրդների կոտորածները:

2000 թ.-ի Մարտի 29-ին Շուէտիայի խորհրդարանը հաստատեց արտաքին կապերի խորհրդարանական յանձնաժողովի ուղերձը, որով պահանջում էր դատապարտել եւ ճանաչել 1915 թ.-ի Հայոց ցեղասպանութիւնը:

2002 թ.-ին Ուելսի Ազգային վեհաժողովը ճանաչեց Հայոց ցեղասպանութեան փաստը: Հոլանդիայի խորհրդարանը 2004 թ.-ին ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: 2004 թ.-ին Սլովակիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: 2014 թ.-ին Նաւարան դարձաւ Իսպանիայի չորրորդ ինքնավար մարզը, որը ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը¹¹: Ցեղասպանութեան փաստը ճանաչել են նաեւ Բասկերի երկիրը, Կատալոնիան եւ Բալեարեան կղզիները: Ապրիլի 6-ին Պուենտէ Խենիլ եւ Լա Ռոտա դե Անդալուսիա քաղաքները պաշտօնապէս ճանաչեցին Հայոց ցեղասպանութեան փաստը՝ համալրելով Իսպանիայի քաղաքների ցուցակը, որոնք պաշտօնապէս ճանաչել եւ դատապարտել են մարդկութեան դէմ գործուած այդ յանցագործութիւնը:

2015 թ.-ի Մայիսի 15-ին Իսպանիայի սենատի լիազումար նիստում տեղի ունեցան Հայոց ցեղասպանութեան թեմայով լսումներ: Սենատը մերժեց Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւի ընդունումը: Նիստի ընթացքում քուէարկութեան դրուեց միջնորդութիւն՝ հասցէագրուած Իսպանիայի կառավարութեանը, որում կոչ էր արուել յստակ քայլեր ձեռնարկել Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի շրջանակում: Այդուհանդերձ, միջնորդութեան օգտին քուէարկեց 14 պատգամաւոր, 130 «դէմ», եւս 68-ը ձեռնպահ մնաց: «Դէմ» էր քուէարկել իշխող «Ժողովրդական կուսակցութիւն» խմբակցութիւնը, որը մեծամասնութիւն էր կազմում սենատում, այդ պատճառով էլ միջնորդութիւնը մերժուեց:

2005 թ.-ի Յունիսին Գերմանիայի Բունդեսթագն առանց նախնական քննարկումների միաձայն ընդունեց «1915 թ.-ի Ապրիլի 24-ի կոտորածների 90-րդ տարելիցի առիթով Գերմանիան պէտք է նպաստի հայերի եւ թուրքերի յաշտեցմանը» բանաձեւը, որը ներկայացուել էր Քրիստոնեա-դեմոկրատական միութեան եւ Քրիստոնեա-սոցիալական միութեան դաշինքի խմբակցութեան կողմից: Փաստաթղթում 20-րդ դարի սկզբին Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած իրադարձութիւնները շեն բնութագրում որպէս «ցեղասպանութիւն», սակայն դրանում առկայ է մի պարբերութիւն, որտեղ

¹¹ <http://www.civilnet.am/news/>

ասուում է, որ միջազգային պատմաբանները կատարուածն անուանում են «Հայոց ցեղասպանութիւն»։ Գերմանիայի նախագահ Յոսիֆ Գաուկը 2016 թ. Ապրիլի 23-ին Բեռլինում մասնակցեց 1915 թ.-ի Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակի պատարագին։ «Հայերի նման ճակատագիրը վառ օրինակ է պատմութեան մէջ զանգուածային բնաջնջման, էթնիկական զտումների, կոտորածների, ցեղասպանութեան, որով յիշուում է 20-րդ դարը։ Դրանով հանդերձ՝ մենք խօսում ենք հրեաների Հոլոքոսթի հետ այդ իրադարձութիւնների նմանութեան մասին, Հոլոքոսթի, որի համար Գերմանիան պատասխանատուութիւն է կրում», - ասել է Գաուկը։ Բացի այդ՝ Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամերտը, չնայած Հայոց ցեղասպանութեան մասին օրինագծի քննարկման երկարաձգմանը, Գերմանիայի նախագահից յետոյ ցեղասպանութիւն անուանեց 100 տարի առաջ Օսմանեան կայսրութիւնում հայերի նկատմամբ կատարուած յանցագործութիւնը¹²։

ԱՄՆ 50 նահանգներից 48-ը պաշտօնապէս ճանաչել եւ դատապարտել է Հայոց ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ Ապրիլի 24-ը յայտարարել է Հայ ժողովրդի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր¹³։ 2000 թ.-ի Հոկտեմբերի 4-ին ԱՄՆ Կոնգրեսի միջազգային յարաբերութիւնների յանձնաժողովն ընդունեց № 596 բանաձեւը, որով ճանաչուում է 1915-1923 թթ. Թուրքիայում հայ ժողովրդի ցեղասպանութեան փաստը։ 2007 թ.-ի Հոկտեմբերի 10-ին ներկայացուցիչների պալատի արտաքին հարցերի յանձնաժողովը 24 «կողմ» եւ 21 «դէմ» ձայնով հաւանութիւն տուեց բանաձեւին, սակայն ճորջ Բուշի վարչակազմը վետօ դրեց պալատում եւ սենատում քուէարկութեան վրայ։

2009 թ.-ի Մարտի 19-ին ԱՄՆ Կոնգրեսում ներկայացուեց Հայոց ցեղասպանութեան մասին նոր՝ 252-րդ բանաձեւը։ 2010 թ.-ի Մարտի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի յանձնաժողովը հաստատեց բանաձեւ, որն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութեան գործողութիւնները որակել է որպէս Հայոց ցեղասպանութիւն¹⁴։ Հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչել են ԱՄՆ-ի բոլոր ազդեցիկ ազգային կազմակերպութիւնները, մասնաւորապէս՝ հրեական՝ ԱՄՆ սիոնիստական կազմակերպութիւնը, Առաջադիմական հրեական միութիւնը, Եբրայական բարեփոխումների միութիւնը, ինչպէս նաեւ ուկրաինական, յունական, լեհական, յունգարական, արաբական, բուլղարական, ռումինական, լատուիական, լիտուական, ֆիլիպինեան եւ սլովակեան համայնքները։

Յովհաննէս Պօղոս 2-րդը դարձաւ Հոռմի առաջին պապը, որը ճանաչեց եւ դատապարտեց 1915 թ. Օսմանեան կայսրութիւնում Հայոց ցեղասպանութիւնը¹⁵։ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչուել եւ դատապարտուել է նաեւ բազմաթիւ ազդեցիկ միջազգային կազմակերպութիւնների կողմից, ինչպիսիք են՝ Եւրոպական խորհրդարանը, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը¹⁶։

1987 թ.-ի Յունիսի 18-ին ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների ենթայանձնաժողովը եւ Եւրախորհրդարանը Թուրքիայի վրայ ճնշում գործադրելու եւ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչել տալու նպատակով Եւրոպայի խորհուրդը դիմելու մասին որոշում ընդունե-

¹² Տե՛ս Հայոց ցեղասպանութիւնը միջազգային իրաւական փաստաթղթերում, հեղինակային հրատարակչութիւն, Երեւան, 2014, էջ 37-43։

¹³ Տե՛ս Բարսեղեան Լ., Ամերիկայի միացեալ նահանգները, Հայոց ցեղասպանութեան դատապարտումը եւ թուրքական հակազդեցութիւնը, Երեւան, 2001, էջ 7, 8։

¹⁴ Տե՛ս Մարքլեան Ջ., Ամերիկայի միացեալ նահանգներու արտաքին փառաբանականութիւնը եւ հայկական հարցը 1900-2009, էջ 125-141

¹⁵ <https://armeniasputnik.am/armenia/20160424/3119423.html>

¹⁶ Տե՛ս Բարսեղեան Լ., Միջազգային հանրութիւնը դատապարտում է Հայոց ցեղասպանութիւնը, Երեւան, 1998, էջ 26։

ցին: 1987 թ.-ի Յունիսի 18-ին Եւրոպայի խորհուրդը որոշում ընդունեց, որի համաձայն՝ 1915 թ.-ի Հայոց ցեղասպանութիւնը Թուրքիայի կողմից չճանաչելը անյաղթահարելի արգելք է դառնում Թուրքիայի՝ Եւրոպայի խորհուրդ մտնելու ճանապարհին¹⁷: 2016 թուականի Ապրիլի 15-ին Եւրախորհրդարանը 554 կողմ ձայնով բանաձեւ ընդունեց, որով կոչ էր անում Թուրքիային ընդունել Հայոց ցեղասպանութիւնը եւ վերահաստատեց 1987 թուականի ընդունած բանաձեւը, որով 1915-1917 թուականներին Օսմանեան կայսրութիւնում հայերի հանդէպ իրականացուածը ճանաչուել էր ցեղասպանութիւն՝ ՄԱԿ-ի ցեղասպանութեան մասին 1948 թուականի կոնվենցիայի դրոյթների համապատասխան: Փաստօրէն ներկայումս ցեղասպանութիւնը ճանաչած եւ դատապարտած պետութիւնների թիւը 20-ից ավելի է:

Ցեղասպանութեան միջազգային ճանաչմանը հասնելը դարձել է բովանդակ հայութեան գերագոյն խնդիրներից մէկը: Սկսած 1915 թ. տարբեր պետութիւններ ընդունել են բանաձեւեր, որոնցում քննադատել են բնիկ հայ ժողովրդի դէմ արուած ցեղասպանութիւնը: Եւ ժամանակն է Հայոց ցեղասպանութեան ճանաչմանն ու դատապարտման հետ միասնաբար առաջ քաշել Հայոց պահանջատիրութեան հարցը, որը յենուած է ինչպէս հայութեան, այնպէս էլ մարդկութեան պատմական անցեալի եւ հայի՝ բնիկութեան միջազգային իրաւունքի վրայ:

ՎԱՐԴԱՆ ԼԱՔԼԱՋԵԱՆ

Երեւանի պետական համալսարանի Միջազգային
յարաբերութիւնների ֆակուլտետի մագիստրոս



¹⁷ Տե՛ս Մարութեան Ա., Հայոց ցեղասպանութեան հետեւանմանի յաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրաւական հիմնաւորումները, Երեւան, 2014, էջ 234-256: